**ԼՈՒՍԻՆԵ ԶԱՎԵՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ**

***Արվեստագիտության թեկնածու, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի դոցենտ, Երաժշտության պատմության ամբիոնի վարիչ***

*ՀՀ և Ռուսաստանի Դաշնության արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, Լենինգրադի կոնսերվատորիայի պատմատեսական ֆակուլտետի և Երևանի կոնսերվատորիայի պրոֆեսոր Գեորգի Տիգրանովը երաժշտագիտության բացառիկ դեմքերից է:*

*հատորյակն է (1.):*

*2008 թվականին լրացավ Գ. Տիգրանովի ծննդյան 100-ամյակը:*

*Հոբելյանական, հիշարժան տարեթիվը նշանավորվեց նոր աշխատության հրատարակմամբ: Գ. Գ. Տիգրանովի ծննդավայրում՝ Պետերբուրգում (այժմ Սանկտ-Պետերբուրգ), հյուսիսային մայրաքաղաքի Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի (ակադեմիայի) երաժշտական քննադատության ամբիոնը լույս ընծայեց անվանի երաժշտագետին նվիրված ժողովածուն (ռուս. լեզվով): Ժողովածուի կազմման և խմբագրման աշխատանքներն իրագործել էին Գ. Տիգրանովի նախկին սան, Պետերբուրգի կոնսերվատորիայի պրոֆեսոր՝ Է. Ս. Բարուտչևան և գիտնականի դուստր, երաժշտագետ, ԵՊԿ պրոֆեսոր՝ Ի. Գ. Տիգրանովան: Գիրք-ժողովածուի խմբագիրներն, հնարավորին պահպանել են ընտրված նյութի տրամաբանական հերթականությունն ու դրամատուրգիական*

# *«ԳԵՈՐԳԻ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ ՏԻԳՐԱՆՈՎ. ծննդյան 100-ամյակին. հոդվածներ, նյութեր, հուշեր» գիրքը*

*Երաժշտագետի հետազոտությունների իրենց ընդգրկումների խորությամբ, արծարծված հիմնահարցերի բազմազանությամբ նշանակալի ներդրում են ոչ միայն հայկական, այլև ռուսական և արևմտաեվրոպական երաժշտական մտքի զարգացման ընթացքում:*

*Գ. Տիգրանովը ռուսական հեղինակավոր երաժշտագիտական դպրոցի ավանդույթների և ստեղծագործական սկզբունքների արժանի ժառանգորդն էր: Բ. Ասաֆևի, Ս. Գինզբուրգի և Ռ. Գրուբերի դասընթացներում յուրացրած հիմնավոր մասնագիտական գիտելիքները զուգակցելով ուրույն, ինքնատիպ գեղարվեստական մտածողությանը, երաժշտագետը ձևավորեց իր՝ «տիգրանովյանական» երաժշտագիտական դպրոցը: Առ այսօր բազմաթիվ հայ և օտարազգի երաժշտագետներ (որոնց դեռ կանդրադառնանք), իրենց համարում են Գ. Տիգրանովի երաժշտամանկավարժական և գիտական սկզբունքների հետևորդներ: Գ. Տիգրանովի երաժշտագիտական ժառանգության կարևորագույն հատվածը կապված էր ազգային երաժշտական մշակույթի պատմության և տեսության հիմնախնդիրներին:*

*Հայ երաժշտագիտության մեջ Տ. Չուխաջյանի, Ա. Սպենդիարյանի, Ա. Տիգրանյանի, Հ. Ստեփանյանի, երաժշտական թատրոնի հետ առնչություններ ունեցած մյուս մեծանուն երաժիշտների ստեղծագործական ժառանգության իրական արժևորման առաջին, հիմնավոր ուսումնասիրությունը Գեորգի Տիգրանովի «Հայ երաժշտական թատրոնը» քառա-*

*ամբողջականությունն ինչն այնքան բնորոշ ու որոշիչ էր Գ. Գ. Տիգրանովի խոսքին ու գրչին:*

*«Գեորգի Գրիգորի Տիգրանով» խորագրով ժողովածուն (2008 թ.) ընդգրկում է. Հոդվածներ, նյութեր, հուշագրություն:*

*Ժողովածուի նյութերը խմբավորված և դասդասված են թեմատիկ և ժանրային բազմազանությամբ: Ընթերցողին ուղղված խոսքին հաջորդում են յոթ առանձին բաժինները ու հավելվածը, որտեղ տրված է Գ. Գ. Տիգրանովի հոդվածների, ելույթ-դասախոսությունների, աշխատությունների պատկառազդու ցուցակը:*

*Գ. Գ. Տիգրանովը, կյանքի վերջին շրջանում գրում էր հիշողություններ՝ իր ժամանակաշրջանի, իրեն շրջապատող մտավորականների ու լուսավոր արվեստագետների մասին: Այդ ձեռագրի հատվածներով է սկսվում Գ. Գ. Տիգրանովի կյանքի պատմությունը, առաջին խոսքը՝ «Առաջին դեմքով» (“От первого лица”): Երաժշտագետի ինքնակենսագրական ակնարկին հաջորդում է դստեր՝ արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Իրինա Տիգրանովայի զավակի ջերմությամբ և խոնարհումով առլեցուն հիշողությունները, որոնք ամբողջացնում են ազնվատոհմիկ գիտնականի լուսավոր կերպարը:*

* «Աշխատությունը» հրապարակվել է Երևանում՝ 1956, 1975, 1979 և 1988 թթ. (ռուսերեն) Առաջին եռահատորը արժանացել է Խորհրդային Հայաստանի Պետական մրցանակի:

# Գ. Գ. Տիգրանովի 110-ամյակը

*Գրքի հաջորդ բաժիններում ընդգրկված հոդվածներն այս կամ այն չափով առնչվում են Գ. Գ. Տիգրանովի մշակած թեմաներին:*

*Ասվել է, որ երաժշտագետի գիտական հետազոտությունների առանցքն ու հիմնաքարը երաժշտական թատրոնն էր իր բոլոր դրսևորումներով (օպերա, բալետ):*

*Երաժշտական թատրոնի փարաբնույթ հարցերը լուսանող Մ. Ա. Ռուխկյանի, Ն. Գ. Սարգսյանի, Լ. Գ. Դանկոյի, Վ. Վ. Մոլչինսկու, Ա. Կ. Քյոնիգսբերգի և Ե. Վ. Մատրոսովայի հոդվածները զետեղված են գրքի երկրորդ՝ «Երաժշտական թատրոնի աշխարհում» (“В мире музыкального театра”) բաժնում:*

*Ն. Գ. Սարգսյանն իր «Գ. Գ. Տիգրանովը և հայ բալետային թատրոնի վերլուծության հիմնախնդիրները» (“Г.Г.Тигранов и проблемы анализа армянского балетного театра”) հոդվածում իրավացիորեն նշում է, որ առ այսօր հայ բալետային թատրոնին նվիրված միակ ամբողջական ուսումնասիրությունը պատկանում է Գ. Գ. Տիգրանովին և երաժշտագետի այս կարգի հիմնավոր աշխատություններից շատերը մեկնակետ են հանդիսացել հետագա հետազոտողների համար: Գ. Գ. Տիգրանովի թատրոնին նվիրված վերլուծական-քննական սկզբունքները կիրառել են իր սաները:*

*Արվեստագիտության դոկտոր Լարիսա Գեորգիի Դանկոն «Պրոկոֆևի թատերական հայացքների համակարգի մասին» (“О театральной концепции Прокофьева”), հոդվածում, որը նրա XX դարի կատակերգական օպերայի խնդիրներն արծարծող ծավալուն աշխատության մի հատվածն է: Նա գրում է. “И в повседневной жизни Георгий Григорьевич был театрален в своей импозантности, пафосной речи, широтой суждений. Словно ничто мелочное и суетное, приземленное не касалось его, как бы самой природой поставленного на контурны античного театра” (2. էջ 32):*

*Գ. Գ. Տիգրանովի առինքնող անհատականությունն իր հետ առնչված արվեստագետներին ստիպում էր փոխել աշխարհընկալման համակարգը, նորովի բացահայտել երաժշտաքեմական արվեստի առանձնահատկությունները:*

*Ավետ Տերտերյանը ոչ միայն հայ կոմպոզիտորական դպրոցի խոշոր ու նորարար ստեղծագործողներից էր, այլև Գ. Գ. Տիգրանովի ընտանիքի անդամը: Այս պրամաքանությամբ, և նաև ուսումնասիրության գիտական արժեքը գնահատելով՝ ժողովածուի հեղինակներն ընդգրկել են արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուխկյանի «Ավետ Տերտերյանի «Ռիչարդ 3-րդի մենախոսություններ» բալետը և «Երկրաշարժ» օպերան» (“Монологи Ричарда 3” и опера “Землетрясение” Авета Тертеряна) հոդվածը:*

*Գ. Տիգրանովի գիտական հետաքրքրություններն ոլորտում էին Ա. Սպենդիարյանը, Ա. Խաչատրյանը, դիրիժոր Կ. Սարաջյանը, Ս. Պրոկոֆևը, հարազատ Պետերբուրգի կոնսերվատորիան և այդ*


Ա. Ռ. Տերտերյան,
Ի. Գ. Տիգրանովա

*կոնսերվատորիայի պատմությունը կերտած խոշոր երաժիշտները: Գրքի՝ «Հաջորդ սիրելի թեմաների հետքերով» (“Вослед другим любимым темам”) բաժնում զետեղված են այդ թեմաներն արծարծող հոդվածներ՝ Գ. Շ. Գյոդակյանի՝ Ա. Խաչատրյանին նվիրված բովանդակալից հոդվածը (այդ հոդվածը Գ. Շ. Գյոդակյանի մենագրության մի հատվածն է): Յ. Ա. Մինկինան երրորդ բաժնի իր հոդվածում ներկայացնում է Պետերբուրգի կոնսերվատորիայի համերգային կյանքով լեցուն համայնապատկերը: Եվ Պետերբուրգի (Լենինգրադի) և Երևանի ստեղծագործական իրադարձություններով հարուստ կոնսերվատորիաների պատմության մեջ Գ. Գ. Տիգրանովն ունի իր անուրանալի և յուրօրինակ տեղը: Կոնսերվատորիաների ստեղծագործական կյանքում Գ. Գ. Տիգրանովի գործունեության հսկայական նշանակությունն առավել բազմակողմանիորեն բացահայտվում է չորրորդ բաժնում՝ «Տիգրանովի դասերը» (“Уроки Тигранова”):*

*Ժողովածուի այս բաժինն աչքի է ընկնում առանձնակի անկեղծությամբ և ջերմությամբ: «Խոսում են» անվանի մանկավարժի, ոչ պակաս անվանի սաները, ովքեր ուսանել, կրթվել ու ձևավորվել են անկրկնելի մտքի և հմայքի տեր անհատականության պարգամներով: Լենինգրադի կոնսերվատորիայի Տիգրանովի դասարանում սովորում էին տարբեր ազգերի ներկայացուցիչներ: Պրոֆեսորը նրանցում ջգտում էր զարգացնել ազգայինից բխող գեղարվեստական ուրույն մտածողությունը: Տիգրանովն իր համապատասխան գիտելիքներով երաժշտական նյութի բացառիկ իմացությամբ դասերը դարձնում էր երաժշտական անմոռանալի իրադարձություն:*

*“Музыка для музыковеда - это и есть научный факт”,- գրել է Գ. Գ. Տիգրանովի սան Կ. Է. Խուդաբաշյանը և շարունակել. “И во время экзаменов требовал, чтобы все советы были подтверждены музыкой. И мы готовясь к экзаменам, учили играть и петь наизусть все арии и хоры из опер, темы симфоний, причем не одним пальцем, а так, как играл Георгий Григорьевич - полноценное клавирное изложение, комментируя оркестровый состав” (2. էջ 215):*

*Գրքի էջերում Գ. Գ. Տիգրանովի մարդկային*

առարկինությունները բացահայտվում են, ասես, ափրճանաքար՝ հոդվածից-հոդված: Ելենա Օբրազցովան գրել է. “…Наш курс восхищался искусством красноречия Г.Г.Тигранова, блестяще излагавшего нам историю советской музыки. Глубокие знания предмета, темперамент и оптимизм заражали нас светлым, солнечным восприятием жизни” (2. էջ 234):

Գրքի 4-րդ բաժնի գիտական հետաքրքրություն ներկայացնող հոդվածներից են Գ. Գ. Տիգրանովի թոռան՝ երաժշտագետ Ռուբեն Տերտերյանի «Երաժշտական դրամատուրգիան, որպես վերլուծության նյութ» (“Музыкальная драматургия как предмет анализа”) և Կ. Ա. Զաղացպանյանի «Երաժշտական դրամատուրգիայի հիմքերը (Տիգրանովի դասերը) (“Основы музыкальной драматургии (Уроки Г. Г. Тигранова)”) հոդվածները: “…Я вновь вспомнила лекции Г. Г.Тигранова, - գրում է Կ. Ա. Զաղացպանյանը, - этого по-мальчишески восторженного ученого-музыканта, смело смотревшего на необьятные просторы будущего и до конца своих дней уверенно и активно шагавшего в ногу со временем” (2. էջ 228):

Գ. Գ. Տիգրանովը, իրավացիորեն, ուներ արդիականության, ժամանակի պահանջներն ու շունչը զգալու կարողություն: Նրան բնորոշ էր նաև ինտերնացիոնալիզմը՝ բառի լավագույն իմաստով «Միասնական ընտանիքի ժողովուրդների մեջ» (“В народов семье единой”) խորագիրն է կրում գրքի 5-րդ բաժինը, որտեղ ընդգծված են Տ. Վ. Բրուլավսկայայի, Օ. Է. Գրավիտիսի, Լ. Վ. Կազանսկայայի և Ա. Բ. Միղյակինայի հոդվածները: Նշված ուսումնասիրությունները ևս, այս կամ այն չափով առնչվում են ժամանակին, Գ. Գ. Տիգրանովի արծարծված հիմնախնդիրներին:

«Ընկերների շրջանում» (“В кругу друзей”) խորագրում զետեղված է Ա. Դ. Մնացականյանի՝ Բ. Ա. Արապովին նվիրված հոդվածը: Ժողովածուի խմբագիրները զուգահեռներ նկատելով Գ. Գ. Տիգրանովի և Բ. Ա. Արապովի միջև, այդ հոդվածն ընդգրկել են ամբողջովին: Երկու արվեստագետների՝ Գ. Տիգրանովի և Ա. Ն. Դմիտրիևի նամակագրության մի հատվածը (բնագրի տարբերակով) նրանց ընկերության և ստեղծագործական համագործակցության ներդաշնակ դրսևորում է, որը գաղափար է տալիս նաև անվանի երաժշտագետների ապրած ժամանակաշրջանի մասին:

6-րդ բաժնի ջերմ ներշնչանքով հեղինակած հոդվածներից է Ռ. Հ. Խարաջանյանի «Հեռավորությունը ընկերությանը խոչընդոտ չէ» (“Расстояние дружбе не помеха”) հուշագրությունը, որում հեղինակը նշում է. “Приезды, вернее, прилеты в армянскую столицу Георгия Григорьевича Тигранова всякий раз становились событием, вносящим новую краску и новую интенсивность в музыкальную жизнь южного города” (2. էջ 286):

Գ. Գ. Տիգրանովը սիրում էր իր հայրենիքը, գնահատում մշակութային հայ գործիչներին, մըշտապես օգնում ու սատարում երիտասարդ երաժիշտներին:

Գրքի վերջին՝ յոթերորդ բաժնում նույնպես՝ հուշագրություններ են: «Սիրով հիշելով» (“Вспоминая с любовью”) բաժնում ընդգրկված են Գ. Տիգրանովի ժամանակակիցների, սաների, անվանի կոմպոզիտորների հիշողությունները:

Ա. Գ. Բուդաղյանի, Գ. Ա. Հարությունյանի, Ա. Գ. Հարությունյանի, Վ. Վ. Սմիրնովի, Լ. Գ. Կովնացկայայի և այլոց հուշերում վերստին, ընթերցողի առջև ուրվագծվում է հռետորական ձիրքով օժտված, կենսահաստատ լավատեսությամբ և բարությամբ առհնքնող Գ. Գ. Տիգրանովի կերպարը: “В Георгие Григорьевиче привлекало отсутствие всякой заносчивости. При всей своей значительности он не вел себя как безоговорочный авторитет. Он всегда был очень доступен, допуская возможность поспорить с ним, в чем-то не согласиться”, - գրել է հայ անվանի կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանը: Կոմպոզիտորը նշում է նաև Հայաստանի Կոմպոզիտորների միության համար այդ շրջափուլում (XX դարի 60-ական թվականներին) Գ. Գ. Տիգրանովի ստեղծագործական և հասարակական եռանդուն գործունեությունը. “Ему были присущи прекрасные человеческие качества - бесконечная доброжелательность, бескорыстная помощь, доброта и всегда - с удовольствием” (2. էջ 353):

Գ. Գ. Տիգրանովի 100-ամյակին նվիրված ժողովածուի կազմման աշխատանքներում Է. Ս. Բարուտչևային և Ի. Գ. Տիգրանովային մեծապես օգնել և օժանդակել են Լենինգրադի Գիտական գրադարանի Պատկերագիտական բաժնի, Պատմության թանգարանի, ինչպես նաև Տիգրանովների ընտանիքի արխիվային նյութերը Գ. Գ. Տիգրանովի լենինգրադյան արխիվային նյութերը հետազոտել են Ա. Բ. Պավլով-Արբենինն ու Ռ. Սմոլյանինովան:

Երևանի Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի Գ. Գ. Տիգրանովի արխիվային նյութերի հետ աշխատել է արվեստագիտության թեկնածու Նարինե Զավենի Ավետիսյանը:

Գ. Գ. Տիգրանովի գործունեությունը լուսաբանած մասնագետների խմբագրական բարեխիղճ աշխատանքների շնորհիվ մեր սեղանին դրվեց արժեքավոր մի գիրք՝ անվանի երաժշտագետի և մանկավարժի անձն ու գործը լուսաբանող շատ հաջողված ժողովածու: Մինչև կյանքի վերջին պահը Գ. Գ. Տիգրանովը մնաց հավատարիմ ճշմարիտ գիտնականի իր առաքելությանը. “Тигранов умер в одночасье, в своем кабинете, во время работы над очередной книгой. Никто не видел его побежденным, он сумел остаться живым, уходя в иной мир”, - ամփոփում է երաժշտագետ Էռա Բարուտչևան (2. էջ 380):

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ


1. *Тигранов Г. Г.*, Армянский музыкальный театр., Т. I Ер., 1956., Т. II Ер., 1960., Т. III Ер., 1975., Т. IV Ер., 1988. *Tigranov G. G.*, Armyanskij vuzykal’nyj teatr., T. I Yer., 1956., T. II Yer., 1960., T. III Yer., 1975., T.

IV Yer., 1988.
2. /Георгий Григорьевич Тигранов. К 100-летию со дня рождения. Статьи. Материалы. Воспоминания., СПб.: Санкт-Петербургская государственная консерватория., 2008. - 400 с. /Georgij Grigor'evich Tigranov. K 100-letiu so dnya rozhdeniya. Stat'i. Materialy. Vospominaniya., SPb.: Sankt-Peterburgskaya gosudarstvennaya konservatoriya., 2008. - 400 s.

***(Տե՛ս կազմը)***

**Բանալի-բառեր.** *Գեորգի Տիգրանով, ՀՀ և ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ, Արամ Խաչատրյան, երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, Իրինա Տիգրանովա, Սանկտ-Պետերբուրգ, թատերական արվեստ, Հայկական օպերային թատրոն, Է. Բարուտչևա:*

**Ключевые слова:** *Георгий Тигранов, Заслуженный деятель искусств РА и РФ, Арам Хачатурян, музыковед, Ирина Тигранова, доктор искусствоведения, Санкт-Петербург, театральное искусство, Армянский оперный театр, Э. Барутчева.*

**Keywords:** *Georgy Tigranov, Honored worker of arts of RA and RF, Aram Khachaturian, musicologist, Irina Tigranova, PhD candidate, St. Petersburg, theatrical art, Armenian opera theater, E. Barutcheva.*

**Տեղեկություններ հեղինակի մասին.** *ՍԱՀԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ԶԱՎԵՆԻ (ծ. 25.07.1972 թ., ք. Երևան): 1986-1990 թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանը: 1990-1995 թթ. գերազանցությամբ ավարտել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի երաժշտագիտության բաժինը (պրոֆեսոր, արվեստագիտության դոկտոր՝ Ժ. Պ. Զուրաբյանի մասնագիտական դասարան): 1993-1995 թթ. եղել է կոնսերվատորիայի նորաստեղծ ուսումնական խորհրդի նախագահ: Զուգընթաց աշխատել է Նաիրիի շրջանի Քասախի ՄԵԴ: 1995-1997 թթ. երաժշտատեսական առարկաներ է դասավանդել Ռ. Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանում: 2000 թ. ավարտել է կոնսերվատորիայի ասպիրանտուրան (պրոֆեսոր, արվեստագիտության թեկնածու՝ Ա. Ա. Սարյան), 2007 թ. պաշտպանել «Կոմիտասագիտություն հայ երաժշտագիտության մեջ» թեկնածուական թեզը: 1995 թ. ԵՊԿ-ում դասավանդում է «Երաժշտության պատմություն» առարկան, ինչպես նաև զբաղվում է կոմիտասագիտության հիմնահարցերով: 2009 թ. դոցենտ է: 2014-ից երաժշտության պատմության ամբիոնի վարիչ: Հեղինակ է՝ Կոմիտասագիտությունը հայ երաժշտագիտության մեջ., գրքի, Եր., 2010 թ.: 2 տասնյակից ավելի գիտական հոդվածների՝ Կոմիտասին //Anuario musical, երաժշտագիտական ամսագիր, 2012 թ., Կոմիտասի գիտական ժառանգությունը նոր լույսի ներք՝ էջ 2-5, Կոմիտաս Վարդապետի ծննդյան 140-ամյակի առթիվ՝ էջ 6-10, «Թող լինի լույսը...»՝ էջ 24-27, //Երաժշտական Հայաստան, 4 (35)2009, Արևելք -Արևմուտք մշակութային աղերսները Կոմիտասի գործունեության մեջ, //Երաժշտական Հայաստան, 2(25)2007, էջ՝ 78-80, Կոմիտաս- մանկավարժի երաժշտագիտական հիմնադրույթների արդիականությունը, //Երաժշտական Հայաստան, 1(24)2007, էջ՝ 30-32, Ն. Թահմիզյանի «Կոմիտասը և հայ ժողովուրդի երաժըշտական ժառանգությունը» աշխատությունը, //Երաժշտական Հայաստան, 1 (20) 2006, էջ՝22-26, Ռ. Աթայանի ներդրումը կոմիտասագիտության մեջ, /Կանթեղ, 3,2006, էջ՝ 164-172, Ե., Աստղիկ, Զեկուցումներով հանդես է եկել Միջազգային երաժշտական գիտաժողովներում՝ Գյումրիում, Երևանում:*

**Сведения об авторе:** *СААКЯН ЛУСИНЕ ЗАВЕНОВНА (род. 25.07.1972., - г. Ереван). окончила 1990 г. Музыкальное училище им. Р. Меликяна (красным дипломом), с отличием музыковедческое отделение (класс профессора, доктора искусствоведения ж. П. Зурабян), 1995 г. Ереванское государственное консерваторию им. Комитаса и 2000 г. окончила аспирантуру (рук. профессор, Заслуженный деятель РА, кадитат искусствоведения А. А. Сарьян). 1993-1995 гг. председатель нового организованного Студентческого совета консерватории. Одновременно работала в ДМШ с. Касаха в области Наири. Преподавала 1995-1997 гг. теоретические предметы в музыкальному училище им. Р. Меликяна. 2007 г. защитила кандитатскую по теме: "Комитасоведение в армянской музыкознании". С 1995 г. преподает в ЕГК историю музыки, доцент (2009 г.). Заведующая кафедры истории музыки ЕГК с 2014 г. Автор музыковедческого труда "Комитасоведение в армянской музыкознании", Ер.: Тигран Мец, 2010 г., 2 десятка научных статей: Комитас //Anuario musical, музыковедческий журнал, 2012 г., Научная наследие Комитаса в новом свете., С. 2-5., К 140-летию рождению Комитаса Вардапета., С. 6-10., "Да будет свет...", С. 24-27., /Музыкальная Армения., 4(35)2009; Восток-Запад культурные связи в деятельности Комитаса, //Музыкальная Армения, 2(25)2007, с. 78-80, Комитас- преподаватель актуальность основы музыки //Музыкальная Армения 1(24)2007 г., с. 30-32, "Комитас и наследие музыки армянского народа" труд Н. Тагмизяна., //Музыкальная Армения 1 20)2006, с. 22-26, "Влияние фортепианных танцев Комитаса на произведения раннего периода творчества А. Бабаджаняна"., //Музыкальная Армения 1 (48) 2015, с. 86-90, Вклад Р. Атаяна в Комитасоведении., /Кантег, 3, 2006, с.164-172. Выступала докладами на Международных научных конференция в Гюмри и Ереване.*

**Information about the author:** *SAHAKYAN LUCINE ZAVEN (born. 25.07.1972, Yerevan). In 1990 she ended Musical school after R. Melikyan (diploma with honors), the musicological department with honors (a class of professor, doctor of art P. Zurabyan). In 1995 graduated from YSC and in 2000 got a postgraduate degree (chef professor, Honored worker of RA, art candidate A. A. Saryan). From 1993 to 1995 had been a chairman of new organized student council of conservatory. At the same time she worked in ChMSh of the village of Kasakh in the field of Nairi. From 1995 to 1997 she taught theoretical subjects in musical school after R. Melikyan.In 2007 defend a thesis on a subject: "Science of Komitas in Armenian musicology". Since 1995 has taught music history in YSC , Docent since 2009.The head of Department of music history in EYC since 2014.The author of musicological work "Science of Komitas in Armenian Musicology", book, Yer., 2010, 20 scientific articles devoted to Komitas, //Anuario Musical, musicological journal, 2012, Under the light of the scientific heritage of Komitas P. 2-5, Devoted to the Komitas 140th anniversary P. 6-10, "Let it be light" P. 24-27, //Musical Armenia, 4(35)2009, East-West cultural supplications in the activity of Komitas//Musical Armenia 2 (25) 2007, P. 78-80, reality of Komitas pedagogue musicological establishment, //Musical Armenia1(24)2007, P. 30-32, "N. Tahmizyan: "Komitas and the musical heritage of the Armenian nation" work, //Musical Armenia 1(20)2006, P. 22-26, "Influence of fortepiano dances of Komitas on the work of A. Babajanyan's early period of creativity", //Musical Armenia 1 (48) 2015, P. 86-90, R. Atayan's investment in Komitas science, /Kantegh 3, 2006, P. 164-172, Yer., Astghik,. She performed with reports in international scientific conferences in Gyumri and Yerevan.*

## Резюме

Кандидат искусствоведения, доцент ЕГК ***Лусине Завеновна Саакян - "Г. Г. Тигранов. К 100-летию со дня рождения. Статьи, материалы, воспоминания".***

В данной статье-рецензии представлен сборник, посвященный одному из видных отечественных музыковедов середины XX века, доктору искусствоведения, профессору, заслуженному деятелю искусств Армении, заслуженному деятелю искусств России Г. Г. Тигранову (1908-1991). Человек ярко выраженного общественного темперамента, лектор, исследователь, педагог, он более полувека был тесно связан с Ленинградской-Санкт-Петербургской консерваторией, а также с музыкальной культурой Армении. Это определило широкий круг авторов настоящего сборника.

## Summary

PhD candidate, docent of YSC ***Lusine Zaven Sahakian - "G. G. Tigranov. Dedicated to the 100th anniversary. Articles, materials, memoirs".***

In this article review the collection devoted to the one of prominent native musicologists of the middle of the XX century, PhD, professor, the honored worker of arts of Armenia, the honored worker of arts of Russia G.G. Tigranov (1908-1991) is presented. The person of pronounced public temperament, the lecturer, the researcher, the pedagogue, he more then half a century has been closely connected with the Leningrad-St. Petersburg conservatory and also with the musical culture of Armenia. It has defined a wide range of authors of the present collection.